



ՎԱՐԻՉ-ԻՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 6

— ՏԵ ՇԱԲԱԹ —

4 ՓԵՏՐՈՒԱՐ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԻԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԾԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՐՆ

ՄԷՆ ԷԼԼՍԿ ԺԱՄՍՅՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, ձեռնարկ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնաւարտուին ինչպէս նաեւ Զենիթը՝ քէ՛ Կ. Պոլիս, եւ քէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնաւարտութիւնը անմիջապէս կը կատարուին գումացոյցից պայմաններով:

Ծանօթ. — Զենիթ ժամացոյցները Բաքիի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Տ. Ա. ԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ) — شرکت صرّتیہ مطبعی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Այի ճառահանի քիւ 52



Չեռփի , ոսփի ու ոսփի եւ ձեռնի
միանգամայն մեկենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի միայն ,
բայց էական էրեն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ չաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհն դիտէ թէ՛

ሀ ት ሄ ነ ት ቡ

ՀԱՅԲԱՅԹԻՁ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մի քննան լաւագոյն է. սոյն մեքննան ամենէն կատարե լագործուածը,
հաստատուելու եւ դիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սնկերի մեքենան կը գնէ :

ՍԻՆԿՆՐԻ մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Լնկերութեան վաճառատանը 532.

ԱՅԲԱՆ (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 345 կրկին.
(2. Մեծ փողոց, Կայաթա Սէրալի Լիսէին դէմ.

ԱՅԲԱ.

(1. Սոս վախաց, ինչ որ էլ չէր կարողանում ասել)

(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւտին դէմ .

(1. Սինկէր խան, Թիւնէլի ետեւը.

Լ.Ս.Լ.Ս.Թ.Ա. (2. Գաբաթէօյ, Թրամիլէի կայարանին դէմ.

1. Սովորան համար .

ՊՈԼԻՍ (1. Ստեփաննոս Բաղդատուի Կաթողիկոսական Վանքի Թեմ, Թիւ 13 .
(2. Սոսիթան Պէյազլիտ, Թրամիլէյի Կաթողիկոսական Վանքի Թեմ, Թիւ 13 .

Զարչը Պոյոու, թիւ 120.

Կատարեալ, Երաշխաւորութիւն

Իսսևանիւղեր գաւառներու քոյր Բաղսնէնէն Վեջ:

ՍԻՆԿԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՂԱՏԵԳԼԻՆ ԿԸ ԳՄՆՈՒԻ ԲԵՐԱ , ՄԵՃ ՎՈՂՈՅ , ԹԻՒ 343 ԵՆ
343 ԿՐԿԻՆ , ՏԻՆՎՈՂՈՒԹԻ ՍՈՒՆՆԸ :

[illegible]

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱԾԵՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԵՆԱ

ԿԵԼԵՔԻ ՃՐՔՂ

Իրականացուի եւ Պահեստի գուշար

31,008,000 **ဒရယ်န**

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ.

Իրաւագրութիւն եւ Պահեստի գումար

47,000,000 **ဒရယ်န**

ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք :

Կարասիք ։
 ՖԷԼԻՔՍ Լաւաբոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
 մարդկային կեանքի վրայ ։

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ։

Ընկերութեանս գրամատուցն է ՔՐԻՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16 :

Ընկերությունս, կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազոր ներկայացուցիչ

ᠢ. ᠠᠨᠠᠭᠤᠨᠠᠨᠠᠭᠤᠨ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 6

ԾԱԲԱԹ

4 ՓԵՏՐՈՒԱՐ 1906

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Մեր թերթերը անցած շաբթու իրենց Պատրիարքարանի բաժնին մէջ միա՝ համուռ հրատարակեցին ցուցակ մը, որ կը պարզէր նոյն շաբթուան տեղի ունեցած պատկազրութիւնները: Եւ, ամէնքն ալ, դարձեալ միահամուռ, «ցաւ» ով յայտարարեցին թէ այդ թիւը պակաս էր նախորդ տարուան նոյն շրջանին թիւէն, և թէ, վերջապէս ամուսնութիւնները կը նուազին մեր մէջ:

Այս լուրը անո՛ր համար մանաւանդ նշանակելի կը դառնայ, որովհետեւ կը զուգադիպի սիրաի տեսակետով այնքան գերազանց շաբթուան մը, ինչպէս է Սուրբ Սարգիսի շաբաթը:

Այս Սուրբը խորհրդանշանն է մեր մէջ արկածախնդրական սիրոյն և իր վիպերգութիւնը՝ հելլէն գեղութիւն հետ, այն ժողովրդական ինքնուրոյն և անուշ զրոյցներէն է, որոնք խանդաղատանքի չունչ մը ունին իրենց մէջ:

Սուրբ Սարգիսի շաբաթը աւանդական է ամուսնութեանց համար: Այս տարի ալ տեսանք որ, նոյն օրը մեծահարուստէն սկսեալ, մինչեւ յետին ձկնորսը, շատեր իրենց ճակատը միացուցին գեղեցիկ սեռի անդամի մը ճակտին: ամէն եկեղեցիներու մէջ ալ հանդէս կատարուեցաւ այդ օրը, և կերպով մը տեղը գնաց աւանդութիւնը:

Բայց ամուսնութեան այս շրջանակին մէջ, անդրադարձում մը եղաւ ընկերային հարցին, այն անվերջանալի խնդրին, որ ոչ միայն մեզի, այլ բոլոր քաղաքակիրթ աշխարհը կ'զբաղեցնէ գրեթէ:

Օրէնսդիրներն ու ընկերաբանները ի վեր կը հալումային, դարման մը տանելու ամուսնութիւններուն նուազումին և ժողովուրդին պակսելուն դէմ:

Մեր մէջ ալ բնական տարիէ ի վեր զբաղում գարձած է առեկեղեցական իշխանութիւնը և Հրապարակազրութիւնը ամէն օր կը գանգատին թէ ընտանեկան երգիք մը կազմելու փոյթը յղազուրկ վիճակ մը ունի մեր երիտասարդներուն քով: Առաջինին ցաւը անկեղծ հիմ չունի, որովհետեւ ուղղակի չահէն բղխած է, բայց երկրորդին, այսինքն մամուլին տեսութիւններուն մեկնակէտը, կասկածի քողին տակ չի կրնար ձգուիլ:

Իրաւ է թէ մեր երիտասարդութիւնը, առանց լուրջ պատճառի կը խուսափի պսակին օրհնութենէն: Ասիկա ըսել կարելի չէ: Ամուրի կեանքը թէև խանդավառ ու կամապաշտ, սակայն միշտ իր տխուր կողմերը ունի, մինակուութեան, ինքնալիկումի տխրութիւնը, վիշտը, որ կեանքի ընկերի մը խանդաղատանքովը կը ցրուի միայն:

Ձեռն ամուսնանար, ո՛չ թէ չամուսնանալու համար, հապա որովհետև չեն կրնար ամուսնանալ: Ահա հո՛ս է տարբերութիւնը և արդարացուցիչ կողմը: Լաւագոյն առիթի մը մէջ, մեր երիտասարդները երբեք չեն դասալքիր ընտանեկան կեանքէն, որուն իտէպը ունի նոյն իսկ ամէնէն անհող, արհամարհոտ և աշխարհիկ անհատը անգամ: Իր ամուրիի ծայրայեղութիւններուն մէջ՝ այնպիսի աւելի հետապնդում մը ունի դէպ ի անդորր և երջանկառիթ յարկը:

Հետեւաբար կամքը չէ որ կը պակսի իրեն, այլ միջոցը: Նիւթականի դժուարութիւնը ամէն վայրկեան չինական պատնէշը կը քաշէ անոր դէմ: Վաճառականի մը քով պաշտօնեայ, իրա՛ւ հիմա կրնայ ապրեցնել ընտանիք մը, բայց ի՞նչ պիտի ընէ, երբ վաղը իր վարպետը վտարէ զինքը, և կամ, սնանկանա՛յ: Ամէն տեղ արգէն լեցուն են պաշտօնեաները, և ինք, ամիսներով թափառելէ ետք հազիւ պիտի կրնայ իր հին ամսականին կէսովը մըտնել վաճառատուն մը:

Միւս կողմէ, կը խորհի որ մեր աղջիկները կոչումը չունին կեանքի ընկերը ըլլալու բառին ամէնէն սեղմ առումովը: Անոնք կազմուած են այն տեսակ խրմորէ մը, որ տունէն դուրս չի կրնար մտածել կամ գործել, և ընդհակառակը, չատերը, դիցուհիի, պաշտելի պուպրիկի մը երազը կը սնուցանեն իրենց փոքրիկ գանկին տակ, երբ հարսանեկան դուռնէ մը ներս մտնեն:


Երիտասարդը նախ վստահութիւն չունի իր նիւթական վիճակին վրայ, և յետոյ երկմիտ է առած կնոջ նկարագիրին, բնութեան և խառնուածքին վրայ: Ոչխար կարծուած աղջիկ մը գայլ կը դառնայ ետքը:

Ահա՛ հարցին երկու եզրերը, և ասոր համար է որ կը նուազի ամուսնացողներու թիւը:

Եթէ դաստիարակութեան գոյնը փոխուէր քիչ մը, եթէ մեր աղջիկները ըմբռնէին թէ իրենք հարս կ'երթան ոչ թէ հաճոյքի առարկայ մը դառնալու համար, եթէ իրենց մէջ խղճմտութիւնը մշակուի դիւրին և նոյն իսկ նեղ

պարագաներուն մէջ դրական օժանդակ մը ըլլալ իրենց ամուսինին և ոչ թէ բեռ մը, այն ատեն, մեր երիտասարդները աւելի արի պիտի ըլլան հիմնեան ասպարէզին մէջ, նկատումներ չպիտի չղթայեն անոնց քայլերը, նիւթականի անյոյս հեռանկարը պիտի ստուերածուի կանացի պատրաստակամութեան շնորհին տակ, այն ատեն առիթը աւելի պիտի բեղմնաւորուի սիրտի խանդավառութիւններու, արբշիւ զոյգեր պիտի քաղճրացնեն մեր ամուրիութեան պարտէզին փուշերը, և այն ատեն աւելի շատ պիտի ծափահարենք « Սուրբ Սարգիսեան » վեպերգութիւններ :

Տ.



ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՇՔԵՂ ՀԱՆՐԻՍ

Երկուշաբթի օր, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ, հարսանեկան շքեղ հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ Ստեփան Էֆէնտի Կիւլէսէրեանի պսակադրութիւնը Օրիորդ Ռէթին Թոքաթեանի հետ, կնքահայրութեամբ Յովակիմ Էֆէնտի Արիկեանի :

Պսակի արարողութիւններուն կը նախագահէր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր շուրջն ունենալով Տ. Հմայեակ և Տ. Արիստակէս եպիսկոպոսներն, վարդապետներ ու Գահանաներ :

Չեռնտութենէն վերջ Ս. Պատրիարք Հայրը գեղեցիկ խրատական մը խօսեցաւ, բնաբան առնելով Ս. Գիրքէն « Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել » խօսքը : Ընտանեկան կեանքի վրայ տեսութիւն մը ընելով, թուեց առն և կնոջ ընկերային պարտաւորութիւնները : Յետոյ աշխարհի մէջ պատահած ճախորդութեանց ատեն փոխադարձաբար ընծայուելիք օգնութիւնները և ընտանեկան կեանքին քաղցրութիւնները : Ն. Սրբազնութիւն օրհնեց այս միութիւնը և վերջացուց իր խրատականը ջերմ մաղթանքներ ընելով նորապսակ ամուսին երջանկութիւն և անոնց պարագայից բարօրութեան համար :

Հարսնեւորները յետոյ առաջնորդուեցան Սբ. Լանտիտի ընդունելութեան մեծ սրահը, ուր խրախճանութիւնները շարունակուեցան մինչեւ գիշեր :

Բազմաթիւ թանկագին նուէրներ զրկուած էին շնորհալի հարսին :

Երկու ընտանիքներու բարեկամներն ու ազգականները փութացած էին անթիւ հեռագիրներով իրենց շնորհաւորութիւնները յայտնել նորապսակ ամուսին :

Խմբագրութիւնս այս բարեպատեհ առթիւ իր խնդակցութիւններն ու շնորհաւորութիւնները կ'ուղղէ թէ՛ նորապսակ ամուսին և թէ՛ Թոքաթեան և Կիւլէսէրեան ընտանիքներուն :

ՆՈՐԵԼՈՒԿ ԳՐԱԳԵՏԸ

Իմ դրացիս նորեկը պատանի մըն է։
Իր այս քսանամեայ հասակին մէջ այնպիսի արտակարգ հմտութեամբ մը կը փայլի, որ կարծես յատկապէս Ազըլ եաշտա տէյիլ, պաշտա տըր Կառաթին ճշմարտութիւնն ապացուցանելու համար աշխարհ եկած է։

Իր առջեւ նշանակութիւն չունին, ոչ իրմէ առաջ եկած վարպետները. եւ ոչ ալ իրմէ վերջը գալիքները ու անհասանելի հըրաշքով մը ձեռք անցուցած անցեալ, ներկայ եւ ապագայ գրականութեան հմայքը, կը գրէ, կը քննադատէ, կը յանդիմանէ, կը պախարակէ այն ամէն գրողները, որոնք մէյմէկ օրինակ չեն զրկած իրեն, իրենց հեղինակութիւններէն, եւ կամ ամենայն երկիւղածութեամբ չեն ծնրադրած քսաներորդ դարուն սկիզբները յայտնուող այս եզակի գրագէտին առջեւ։

Եւ արձակներու, ոտանաւորներու, ներկարագրութիւններու պատրուակին տակ կը հրապարակէ, կը նախատէ, կը դատաւարէ այն ամէն երիտասարդները, որոնք իրենց բարեկրթութեան, զարգացեալ մտքին ու այլ հրապուրիչ ձեւերուն շնորհիւ, առաջնակարգ դիրք մը գրաւելով սալօններու մէջ, ամուլ ասպարէզ մը միայն կը թողուն իրեն, յուսահատօրէն կձկուելու համար անկիւնի մը խորշը եւ կամ թիկնաթոռի մը ետին։

Նախանձո՞տ է արդեօք դրացիս։

— Չեմ դիտեր, բայց սա բացորոշ է որ ընդհանրապէս այսպիսի երեկոյթներէ վերադարձած գիշերները կը գրէ ու կը գրէ։

Ամէնէն աւելի անոնց դէմ կը կատղի, որոնք առանց կանխաւ իրմէ արտօնութիւն առած ըլլալու, կ'եղեն անձնական յիշատակներ գրի կ'առնեն եւ կամ անոր ասոր ոտանաւոր եւ արձակ ուղերձներ կը ձօնեն. ըստ որում այս ճիւղը բոլորովին իրեն վերապահած է եւ չի ներեր որ իր գրական մենաշնորհը կապտուի ուրիշ գրողներէ. եւ երբ տեսնէ որ գաւառացի գրողներ ալ հրապարակաւ ձօներ հրատարակելու կ'եղեն, իսկոյն զայրոյթով մը կը բացադանչէ։

— Ի՞նչ, գաւառացիներն ալ գէվգէվութիւն ընելու կը յանդգնին։

Առանց Փանթզըի դուրս չելեր բնաւ, եւ կը նայի որ միշտ Ծրանսացիներէ օրինակած ըլլայ զայն, որովհետեւ թէեւ մեր թաղը կը բնակի, սակայն Բերաթի մէջ կ'ապրի... իր գլխովը։

Իր ամենամեծ երջանկութիւնը գաւառացի չըլլալն է եւ զինք մաշեցնող ախտն ալ Բերաթի ծնողներէ չկրնալ սերիլը։

Շատ անգամ կը խորհի որ ի՞նչ պիտի ըլլար եթէ զարգացած շրջանակի մը մէջ ծնած ըլլար. եւ այնչափ կ'ընկղմի իր այս խոհերուն մէջ, որ հազիւ հազ արշալոյսին կրնայ սթափիլ եւ իր ձայներով թրթռացնել պատուհանին ապակիները։

Ամէն օր ոտանաւորներու նոր սեւ մը կը մշակէ եւ երբ տեսնէ որ մշակութիւնները անյաջող կ'երթան, թող կուտայ նախորդին օձիքէն եւ տարրեր սեռի մը կը սկսի, այնպէս որ այսօր մէկէ աւելի հովիւներով արածուելու չափ անչափ ոտանաւորներու տէր է, առանց կարենալու այդ ոտանաւորներէն մէկը գէթ հինգ փարայի ծախել։

Երբ յուսահատի այլ եւս ոտանաւորները մշակելէ, այն ատեն կը սկսի գլխարկները մշակել, ինչ որ թէ՛ աւելի դիւրին եւ թէ՛ նպատակայարմար է դրացիները իր վրայ խօսեցնելու։

— Քա՛, կ'անցնի կոր, ոտքդ պագնեմ սըվոր նայէ, կէնէ չափզան փոխեր է, աս տղան ալ ինքզինքը խալիպի մը չկրցաւ մտցուցեր էր, վիրա վիրա չափզան կը փոխէ, սանքիմ աղւոր էրէվայ պիտոր զահէր... ալլըմա՛ն...։

Թէեւ դրացիս մեզ համոզած է որ արարած աշխարհ իր վրայ կը հիանայ, սակայն իրեն հետ մօտէն յարաբերութիւն ունեցողները կ'ըսեն թէ շոգեհաւին մէջ իրեն ծանօթ ելլելը անուրախի գլխացաւէ մը բռնուելու նախերգանք մըն է։ Իսկոյն կուգայ քովդ եւ քակելով սովորաբար ձեռքը կրած թուղթերու ահագին ծրարը, ամենամեծ սքանչացումներով եւ հռետորական շարժումներով ու ձեւերով կը սկսի կարդալ իր մէկ նոր ժողովածոն, զոր ինք հեղինակու-

թիւն կ'անուանէ եւ անուան լաւ անգամ կարգացած է քեզ:

— Սա կտորը շատ աղուոր է: Կէ՛:

— Անշուշտ:

— Բայց դուն սա՛ մտիկ ըրէ տէ տես:

— Հարկ չկայ, արդէն գիտեմ որ աղուոր կը գրես:

— Ձէ, շիտակը խօսէ, մինչեւ հիմայ այսպէս ոտանաւոր մը գրող եղած է:

— Ամենեւին:

— Շատ անգամ ես իսկ կը զարմանամ թէ ուսկի՛ց կը յղանամ կոր այս գաղափարները:

— Ես ալ կը զարմանամ:

— Հապա երէկուան յօդուածս:

— Այո՛:

— Կարդացի՞ր:

— Ի՞նչ ըսել է:

— Հիանալի կերպով կապած չէ՞ի Տիկինը բարեւելու ժամանակ երիտասարդին ձախաւելութիւնով բա՛՞ջ չամուրիին մէջ խնայը:

— Աղէկ կապած էիք:

— Վերնագիրին հաւնեցա՞ք:

— Հաւնեցայ:

— Վերնագիր մը գրել ամբողջ յօդուածը գրել ըսել է:

— Այո՛, այնպէս է:

— Վաղուան համար ի՞նչ գրեմ, ինծի սիւժէ մը տուէ՛ք:

— Ի՞նչ որ յարմար կը դատէ՛ք:

— Սա զրկեմ կ'ըսեմ կոր լրագրին, կարգամ տէ մտիկ ըրէ՛ք:

— Աւելի լաւ չըլլա՞ր որ տպուեցն վերջը կարդանք:

— Ուրեմն սա կտորը կարդամ, զոր խմբագրութիւնը դուրս ձգած էր երէկուան յօդուածէս: Եղբայ՛ր, բուն հոգին կը հանեն կոր այս խմբագիրները գրուածքին ու ըսքէ՛թ մը կը թողուն:

— Համամիտ եմ:

— Մտիկ ըրէ՛ք:

— Աւելի լաւ չըլլա՞ր տպուեցն վերջը կարդանք:

— Բայց ասիկա այլ եւս չպիտի տպուի, երէկուան յօդուածէս դուրս ձգուած է, տեսնաս ինչ հիանալի կտոր է:

— Յօդուածին հետ կը կարդանք:

— Ո՞ր յօդուածին:

— Ըսած յօդուածիդ:

— Երէկուան յօդուածս չկարդացի՞ք:

— Թերթը անկողնիս մէջ կը կարդամ:

— Հապա կարդացի ըսիք հիմայ:

— Յիշողութենէս վրիպեր է:

— Ուրեմն յօդուածս ալ կարդամ, ու այս դուրս ձգուած կտորն ալ, որ տեսնաս թէ բնագիրը որչա՛փ կը տարբերի հրատարակուածէն:

— Ուրիշ առթիւ:

— Սրտնեղութիւն մը ունիք, ի՞նչ:

— Այնպէս բան մը:

— Ուրեմն զուարթ մէկ գրութիւնս կարդամ որ զուարճանաք:

— Կաղաչեմ ձանձրութիւն յանձն մի առնէք, պտոյտ մը ընել կ'ուզեմ վերը:

— Ուրեմն վա՛ղը:

— Այո, վաղը:

Եւ այսպէս մէկը ձեռքէ փախցնելուն պէս կը փախչի միւսին օձիքին:

* * *

Շոգենաւին ուղեւորները կ'ըսեն որ դրացիիս հետ ճամբորդելու պարագային ամենամեծ բարեբաղդութիւնը, չորս կողմդ գեղեցիկ սեռէն մարդ չգտնուիլն է, իսկ եթէ չըջագգեստի նշոյլ մը տեսնէ, ալ բանդ բուսաւ. իր խելքովը զքեզ պատրուակ կը բռնէ ու կը սկսի այնպիսի գրութիւններ կարդալ, այնպիսի ականարկութիւններ ընել, եւ այնպիսի նիւթերու վրայ խօսք բանալ, որ վերջապէս դուն ալ կը զգուիս, չորս կողմդ եղողներն ալ կը զգուին ու ինք դեռ կը շարունակէ չաղակրատել. նոտարաններէ փոխանակուած դժգոհանքները միշտ ի նպաստ իրեն հիացումներ մեկնելով:

Անցեալ օր շոգենաւին մէջ, բարձրագոյն ընտանեաց պատկանող մայր մը, իր երեք չափահաս եւ յոյժ գեղանի աղջիկներով ճամբորդութիւն կ'ընէր. ասոնցմէ քիչ մը հեռուն նոտած խիստ շնորհագեղ երիտասարդ մը լրագիր կը կարդար. դրացիս ո՛ւր է ո՛ւր չէ կուգայ, կը ծալլուի կը նստի երիտասարդին մօտ:

— Վերցո՛ւր պէ աղբար սա լրագիրը, Աստուածդ սիրես, այսչափ ատենէ ի վեր

գրեզ կը փնտռէի կոր եւ հագիւ հազ յաջողեցայ ձեռք անցընել, չե՞ս գիտեր որ առանց քեզի ես չեմ կրնար ապրիլ:

— Գիտեմ:

— Որ իմ մտատիպարս կը պատկերացընես:

— Շնորհակալ եմ:

— Որ իրարու համար ստեղծուած ենք:

— Շատ ազնիւ էք:

— Որ բազմ մըն է ինձ քու ընկերակցութիւնդ:

— Բարեբաղդ եմ:

— Վերցո՛ւր սա լրագիրը, չէ՞նէ հիմա կը ձմութկեմ:

— Քիչ մը եւս:

— Ի՞նչ ըսաւ քուկինդ երէկուան նկարագրութեանս:

— Բան մը չըսաւ:

— Բնաւ չյուզուեցա՞ւ:

— Ո՛չ:

— Իրեն համար ըրած ակնարկութիւններուս ի՞նչ ըսաւ:

— Այո՛:

— Մտիկ չե՞ս ըներ կոր ըսածներուս:

— Ի՞նչ ըսել է, ամենայն սիրով:

— Հապա այո՛, կ'ըսես:

— Ո՛չ ըսեմ:

— Է՛, է՛, է՛, չպիտի՞ ձգես սա լրագիրը:

— Հիմայ հիմայ:

Եւ լրագիրը ձեռքէն բռնի վար առնելով,

— Քիչ մը տեսնուինք:

— Շատ լաւ, տեսնուինք:

— Ո՛ւր ես այսչափ ատենէ ի վեր, չես երեւար կոր:

— Սանկ նանկ:

— Առջի օրուան ոտանաւորիս համար ի՞նչ կարծիք ունիս:

— Գլուխ-գործոց մը կարելի է համարիլ:

— Ի՞նչ ընեմ, կը սիրեմ սեւ աչքերը, անկից դուրս չեմ կրնար ելլել:

— Շատ լաւ կ'ընէք:

— Լամաութին կ'ըսէ որ բանաստեղծ մը պէտք է իր ամէն գրութեանց համար մէյ-մէկ մտատիպարներ ունենայ. հակառակ պարագային բնական ձեւերով չկրնար գծել պատկերը:

— Շատ ձիշտ է:

— Եւ մտատիպարներ չեն պակսիր, փա՛ռք Աստուծոյ մեր չուրջը:

— Անշուշտ:

— Ամէն անգամ որ յափշտակուիմ գեղեցկութենէ մը, ընդհանրապէս հետեւեալ օրը գրիչս կը յորդի. տե՛ս վաղը ինչե՛ր պիտի գրեմ:

— Նայէ՛ որ խելքդ ալ չյորդի:

— Վաղուան ոտանաւորիս վերնագիրը պիտի ըլլայ. « իմ յոյսն առ կոյսն »:

— Ուրիշ առթի վերապահէ գրական ծրարագիրներդ:

— Ո՛չ, ներշնչման ժամերէն պէտք է օգտուիլ... ո՛հ, հիմայ, հիմայ կը պատկերանան մաքիս առջեւ գրելիքներս:

Շոգեմարին մեջ երբ գեղց տեսայ,
Կամիս շաւ ուզեց որ ըլլամ փեսայ,
Բայց մայրդ անգութ ինչո՞ւ ինձ չամսայ
Ու իմ ձեռ տունը գալուս չը բաղձայ:

Տիկինը որ ամենայն վեհանձնութեամբ կարեւորութիւն չէր տար դրացիիս, այս վերջին ոտանաւորէն բոլորովին զգլխած՝ քաղաքավարական ձեւերու տակ ճնշուած կատաղութեամբ մը երիտասարդին դառնալով:

— Այս պարոնը գրագէտ մըն է անշուշտ:

— Այո՛, տիկին, այնպէս կ'ըսէ:

— Պատիւ ունիմ յիշեցնել իրեն որ կարդայ Ռչտունի՛:

« Անխելք կասուն անմտօրէն

Մաս կը յուսայ կարկանդակէն »

վերնագրով ոտանաւորը, քաջայոյս եմ որ շատ պիտի օգտուի անկից:

Եւ հանդիսաւոր լուրթեան մը մէջ աղջիկներովը կը հեռանայ:

Կ'ըսուի թէ դրացիս այս դէպքէն ի վեր շոգեմարին մէջ բանաստեղծ ելու երդում ըրած է:

ՔԱՍԻՄ



Եթէ օրէնսդիր մը ըլլայի՝ կրներուն չափազանց պճնասիրութեանը համար կառաջարկէի որ մէկ կնկան չորս էրիկ տրուի, անոր ծախսերուն կուրծք տալու համար:

ՊԱՐԶ ԻՍՄԲԵՐ

ԼԷՅՊԵԼԻԻ ԶԵՌՆՈՅԸ

Հէյալիի Յունաց եկեղեցիին մէջ եպիսկոպոսը հանդիսաւոր պատարագ կը մատուցանէ ի ներկայութեան բազմաթիւ հաւատացեալներու, որոնց մեծ մասը հայ-չայֆի կը պատկանին: Այդ միջոցին հարուստ կին մը կը մոնէ եկեղեցիէն ներս չքեղ արդու-զարդով մը եւ փողփողուն աղամանդներով: Ամէնուն նայուածքը կը հանգչի այս շարժուն պերճանքին վրայ, որ յաւակնութեան անջըրպետին մէջ կը սաւառնի ճախրապաշտեղեկակապոյս բեհեղեայ մեծարժէք շրջապատ մը հագած է, ժանեակներու ալեծածան կոհակներուն մէջ պերճափայլ եւ գլխարկը, որուն վրայ արուեստին բոլոր ներութիւնները ու ներդաշնակութիւնները իրարու հետ ընդելուզուած են, գլուխ-գործոց մըն է արդուզարդի:

Իր փափուկ մատները բանտուած են մետաքսեայ մոխրագոյն ձեռնոցի մը մէջ, զոր ճակտին կը տանի խաչակնքելու համար: Պատարագւոր եպիսկոպոսը կը տեսնէ այս սրբապաշտութիւնը եւ իրրեւ աւանդապահ ու նախանձախնդիր եկեղեցական մը, կ'ընդհատէ արարողութիւնը ու սեղանին վրայէն բարձրաձայն կը հրամայէ ազնուափայլ հաւատացեալին՝ ձեռնոցները հանել չոտով ու այնպէս խաչակնքել երեսը: Կինը փոփոխակի կը կարմրի ու կը աժգունի, եւ եպիսկոպոսին հրամանը կը գործադրէ իսկոյն քրիստոնէական հեղութեամբ եւ համակերպութեամբ:

Եւ արարողութիւնները կը շարունակուին ու աղօթքները դարձեալ կը բարձրանան դէպ ի վեր, խունկերու եւ կնդրուկի անուշ բուրումներուն հետ:

Ահաւասիկ եկեղեցական նախանձախնդրութեան գեղեցիկ օրինակ մը:

ՍԻՄԵՈՆ

Իգական սեռն տկար էակ մ'է որպէս մեղու, բայց երկուքին ալ խայթուածքը կծու է:

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԹԵՐԹԻ ՄԸ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Բիւրակն շարաթաթերթը իր կրօնականի տարազը հանելով գործի մարդու առաջնորդ մը եղաւ, նպատակ ունենալով՝ սորվեցնել առեւտրական գիտութեան տարերքը:

Մեր համայնքը, որ առեւտրական ճանչցուած է գերազանցապէս, արդարեւ պէտք ունէր այս տեսակ հրատարակութիւն մը, որ զգալի պակաս մը կը լեցնէ:

«Բիւրակն» իր ծրագրով կը խոստանայ ոչ միայն առեւտրական հաշուակալութեան, իրաւաբանութեան եւ ուրիշ պիտանի նիւթերու վրայ խօսիլ, այլ նաեւ նոր եւ դիւրին մէթոսով մը պիտի սորվեցնէ Գերմաներէն առեւտրական լեզուն, որ այնքան անհրաժեշտ է գործի մարդոց եւ գործի մարդ ըլլալու պատրաստուող ուսանողներուն:

Կը յանձնարարենք «Բիւրակն»ի ընթերցումը, թէ՛ գործի մարդոց եւ թէ՛ ուսանողներու, որոնց համար օգտակար դասագիրք մը կրնայ նկատուիլ:

Փափաքելի էր որ մեր հայ վաճառականները ոչ միայն իրենք բաժանորդագրուէին, այլ նաեւ մէյմէկ օրինակ նուիրէին գաւառական աղքատիկ վարժարաններու, որոնց համար կրնայ ճշմարիտ բարիք մը ըլլալ:

Կը շնորհաւորենք մեր համակրելի պաշտօնակիցը, եւ յաջողութիւն կը մաղթենք:

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Տ. ԲԱՍԻՄ
ՍԻՄԵՈՆ ԾԵՐՈՒՆԻ Յ.ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ
ԼԵԻՈՆ-ՎԱՂԻՆԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ
Բ. ԼՈՒԹԻԻՆԵԱՆ
ՀՐԱԶԵԱՅ ՏԷՐՈՍԿԻ
ԳՐ. ՀԱՄԲԱԿԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ ԵՐՄՈԴ

ԵՆ

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ԿԸ ԲՈՂՈՒՔ՝

ԱՂԶԿԱՆ ՄԸ

ՅՈՒՐԱԳԻՏՈՒՄ

Դպրոցական արձակուրդի առիթէ մը օգտուելով, փափաքեցայ այցելութիւն մը տալ կանանց յատուկ թերթին խմբագրատունը:

Այս փափաքս բնականաբար անտեղի չէք գտներ, որովհետեւ թէ՛ կին եմ եւ թէ՛ երբեմն յօգուածներ ալ կը գրեմ, եւ այս կրկին տեսակէտներով ինծի համար մեծ հաճոյք մը պիտի ըլլար անձամբ ողջունել կանանց թերթին շնորհալի խմբագրուհիները, մասնաւորապէս Օրիորդ Արաքսի Խարտեաշեանը, որուն կուզէի շնորհաւորութիւններս յայտնել՝ փափկանոյշ վտանգը մատնանշած ըլլալուն համար:

Եւ որովհետեւ բնաւորութեամբ քիչ մը անկեղծ եմ, անշուշտ պիտի ներուի ինծի եթէ դիտողութիւններս անկաշկանդ կերպով յայտնեմ:

Ամէնէն առաջ բնաւ յարմար չի տեսայ որ կիներու յատուկ հանդէսը հրատարակուի այնպիսի միջավայրի մը մէջ, ուրիշ իւրի հոտ կը բուրէ, բայց ոչ թէ ագնիւ իւրի, այլ ստորին եւ գարշաբոյր իւրի: Այս շըրջանակը բնաւ չի համապատասխաներ գրական սաղնի մէջ ապրող կիներու, որոնք անշուշտ աւելի ճաշակաւոր միջավայրի մը կը կարօտին: Պիտի ըսէք թէ ասիկա չնչին դիտողութիւն մըն է, բայց իբրեւ կին՝ նախանձախնդիր ըլլալով փափկութեան, բնաւ չեմ ներեր որ մեր սիրելի Ծաղիկը այսպիսի գարշաբոյր մթնոլորտի մը մէջ թարչամի: Երկմարդերու հանդէսները քիչ շատ *présentable* չըջանակներու մէջ է որ կը հրատարակուի, եւ ինչո՞ւ համար կնոջական դատր պաշտպանող, եւ իգական դաստիարակութեան վարճացման սատարող թերթ մը իր շրջանակի ընտրութեան համար քիչ մը աւելի հոգ չի տանի: Այս դիտողութիւնը անցողակի ընելէ ետքը, պատմենք իմ տպաւորութիւններս Ծաղիկի խմբագրատունը ըրած այցելութեանս վրայ:

Հին, խարխաւած սանդուխի մը քարէ աստիճաններէն ելլելով ուղղուեցայ դէպ իցած սենեակ մը, որուն մթութեանը մէջ փոխա-

նակ գեղանի դէմքերու՝ տեսայ միայն վառվռուն երիտասարդ մը, որ գլուխը կախած թերթին փորձերը կը սրբագրէր:

Աղջկան մը ներկայութիւնը այդ սենեակին մէջ, որ իմ կարծիքովս շատ բնական պիտի ըլլար, ընդհակառակը զարմանք պատճառեց կարծես, որովհետեւ յիշեալ երիտասարդը պիչ պիչ երեսս նայեցաւ, իբր թէ իմ ներկայութիւնս աններելի բան մը ըլլար: Իզուր չորս կողմս փնտռեցի պերճախօս խմբագրուհիները, զորս կերեւակայէի տեսնել գրասեղաններու առջեւ նստած:

Երիտասարդը փափկանկատ հոգածութեամբ հիւրասիրեց մեզ, եւ իւր դիւրահաղորդ բնաւորութեամբը քաջալերեց զիս մտերմորէն տեսնուիլ իրեն հետ Ծաղիկի յօգուածագիրներուն վրայ: Այս տեսակցութեան շնորհիւ, որ բաւական երկար տեւեց, իմացայ որ խմբագրուհիներէն եւ ոչ մէկը այդ գրասենեակը կուգայ, այլ յիշեալ երիտասարդն է որ անձամբ կը դիմէ եւ յօգուածները կ'ըստանայ. այս յայտնութիւնը, շիտակը ըսելով, շատ յուսախաբութիւն պատճառեց մեզի: Իրաւ է որ բաւական մեծ յառաջադիմութիւն մըն է, երբ մեր տիկիններն ու օրիորդները սկսած են իրենց գրիչը ի սպաս դնել կնոջական դատին, բայց մենք կը փափաքէինք որ ճիշդ այդերուն պէս իրիւս տրուեստ մը նկատէին խմբագրութիւնը:

Որչափ որ կը յիշենք մեր մէջ միայն նախկին նստյեանն էր որ ամէն նախապաշարում առաթուր ընելով ճիշտ էրիկ մարդ խմբագրի մը պէս առասու՛ն կանուի խմբագրատունէն ներս կը մտնէր եւ ընթացիկ գործերով զբաղելէ ետք, վերջին շոգենաւով իր տունը կը դառնար այրերուն պէս: Մենք Փեմինիզմը ճիշտ այս կերպով կը մբռնենք, բայց թէ խմբագրուհիները չի կրցանք անձամբ տեսնալ, գոնէ կրցանք անոնց աշխատութեան եղանակին վրայ գաղափար մը կազմել:

Մեր բարեկամ խմբագիրը, մեր հետաքրքրութիւնը գոհացնելու համար պատմեց որ օրիորդ Խարտեաշեան տաղանդաւոր աղջիկ մըն է, որ բարձրագոյն վարժարանէ մը շրջանաւարտ ելնելէ ետքը, անգլուստ փափաք մը ունեցած է, էրիկ մարդերու պէս ջղուտ եւ կորովի յօգուածներ գրել: Ինք

նիհար ու բարեկազմ, սիրուն օրիորդ մըն է որ կարճ չըջազգեստը հապիւ թէ քանի մը տարիէ ի վեր փոխած է: Օրիորդ Զապէլ Մոմճեան, ակնոցաւոր համակրելի գրագիտուհի մըն է, որ կրցած է քանի մը յօդուածներով անուն մը շինել իրեն: Այս օրիորդն ալ բարձրագոյն վարժարանէ մը ելած է, եւ կը խոստանայ իգական սեռի պատիւ բերող գրագէտ մը ըլլալ: Օրիորդ Նուարդ Մեղրուիկեան, աւելի էրիկ մարդ մը պէտք էր ծնած ըլլա՛լ քան թէ կին, որովհետեւ կենդանի փափկութիւնը մեծ չափով մը տրուած չէ իրեն, առնական ջղայնութիւն մը ունի, որուն հետքերը կերեւան արդէն իր գրուածներուն մէջ: Գալով տիկին Սըրբուհի Քիւչիւկեանի՝ դիրուկ, ազուոր տանտիկին մըն է, որ կենցաղագիտութեան մէկ մարմնացումն է: Արդէն իր յօդուածներէն կերեւայ թէ՛ որքան կոկիկ բնաւորութիւն մը ունի:

Շնորհակալութիւնս յայտնելով յիշեալ երիտասարդին, իր տուած տեղեկութիւններուն համար, մեկնեցայ «Ծաղիկ»ի խմբագրատունէն, եւ ուղղակի Բերա Էսսեան վարժարանը գացի, ուր քանի մը ժամուան մէջ շատ հետաքրքրական տեսարաններու հանդիսատես եղայ:

Այս տեսարանները իմ սովորութեանս համաձայն նոյնութեամբ պիտի ներկայացընեմ յաջորդ յօդուածիս մէջ, զոր պիտի կարդաք երկու շաբաթ վերջ:

ԵԼԻՋ ՀԱՃԵԱՆ



Սիրահարութիւնն տօնավաճառ մ'է որ երիտասարդութեան եղանակին մէջ կը բացուի, և ծերութեան մէջ կը փակուի, սակայն կան ոմանք որ ուշ կը մնան և այս տօնավաճառին փակման մօտ կերթան հոն ապրանք գնելու և ետ կը դառնան ձեռնունայն:

×

Խոհեմութիւնն՝ որ կրից սանձն է, գրեթէ միշտ կ'իրքեւրէն կը սանձուի:

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

ԿԸ ԲՈՂՈՔԷ՝

(Շարունակութիւն 5րդ թիւէն)

— Ի՞նչս կամ ո՞ւր տեղս պիտի փոխեն, վարպետ: Ես իմ վրաս հինցած բան մը չեմ տեսնար, որովհետեւ իմ գոյութեանս առաջին օրէն գործածուած չեմ արդէն. եւ չի գործածուած բան մը ի՞նչպէս կը հիննայ: Անոնք որ հինցած կը հռչակեն զիս եւ փոխելու կը ձեռնարկեն, գործածուիլ տեսած են արդեօք. ի՞նչ տարօրինակ փոխադրութիւն է աս, բայց . . . Թոյլ տուէք որ շարունակեմ թուել, տեսած տարօրինակութիւններս:

Չի պիտի խօսիմ Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. ԺԱ. ԺԲ. ԺԳ. եւ ԺԴ. յօդուածներուս վրայ, վասն զի ասոնք գլխաւորաբար դասարաններու բաժանման եւ դասերու աւանդման ծրագիրը կը պարունակեն, եւ որոնք իմ էութեանս արտաքին երեւոյթները կը համարուին, թէեւ ասոնք ալ շատ թերի կերպով կը գործադրուին:

Ուրեմն ուշի ուշով կարդանք ԺԵ.րդ յօդուածը:

Թաղ մը չի կրնար Բարձրագոյն Նախարարարան հաստատել, երբ իւր Տարրական Նախարարարանի վիճակը գոհացուցիչ չի նկատուիր ու այսպիսի հաստատութիւն մը պահելու նիւթական կարողութիւնը չի ճանչցուիր վիճակին Ուսումնական ու Տնտեսական խորհրդոց կողմանէ, որք, յետ օրինական քննութեանց, խնդիրը կը ներկայեն տեղւոյն Խառն Ժողովին վերջնական տնօրէնութեան:

Այս յօդուածիս հետ սերտ առնչութիւն ունի նաեւ ԺԶ. յօդուածս, զոր հարկ կը դադարեմ նոյնութեամբ մէջ բերել:

Ի չգոյէ բարձրագոյն Նախարարարանի, թաղ մը կրնայ բարձրագոյն Նախնական կրթութեան լրացուցիչ դասընթացք մը յաւելուլ իւր Տարրական Նախարարարանին վըրայ, երբ առնուազն 10 տղայք, բարձրագոյն դասընթացքն աւարտած կուզեն շարունակել իրենց ուսումն, եայլն:

Արդ իմ այցելութեանս միջոցին հանդի-

պէցայ լրացուցիչ ունեցող վարժարաններու, որ արդարեւ ծաղրելի կացութեան մը մատնուած են: Ո՞վ հարցուցած փնտռած է թէ, արդեօք նոյն վարժարաններուն տարական նախակրթարանի վիճակը գոհացուցիչ նկատուած է ու այդպիսի հաստատութիւն մը պահելու նիւթական կարողութիւնը ճանկացուած է Ուսումնական եւ Տնտեսական խորհրդոց կողմէ. օրինական ֆնկցիոն կատարուած է. խնդիրը իսկ ժողովոյ վերջնական սիօրեկոնքեան ներկայացուած է:

Ո՛չ, ո՛չ, ո՛չ:

Տարրական նախակրթարանի վիճակը զէրօ է, դասընթացքները զէրօ չըլան մը կը բոլորեն, իսկ նիւթական կարողութիւնը զէրօյէն ալ վար է, քանի որ հանգանակութեան ձեռնարկուած է բացը գոցելու համար: Պահանջեցէ՛ք, մեծ վարպետ, պընդեցէ՛ք, թող մէջտեղ ելնեն Ուսումնական եւ Տնտեսական խորհուրդները, դիմեցէ՛ք իսկ չի պիտի փոխեմ ըսածներէս:

Եւ յետոյ.

Առնուազն 10 տղայք, ԱՌՆՈՒԱԶՆ կը հասկնաք, վարպետ, չարունակել ուզելու են իրենց ուսումն: Ո՛ր են այդ 10 տղայք: Ետ տեղեր 6-7 աղջիկներ միայն կը շարունակեն, ասոնց ալ 4ը կամ 5ը հազիւ ներկայ կըլլան դասաւանդութեանց:

Այս ի՞նչ օրէնք է, ի՞նչ արդարութիւն: Հանգանակութեամբ դրամ մուրալ 6 աղջկան ամսական մօտաւորապէս 30-40 ոսկի ծախք ընելու համար, մինչ անդին հարկաւոր տղայք երեսի վրայ թողուած են: Ինչո՞ւ դուրս չի նետել այդ վեց աղջիկները եւ եղած ծախքին կէսը միայն յատկացնել տարրական նախակրթարանի աշակերտներուն, որոնք չաս կանոնաւոր եւ օգտակար չըլան մը պիտի կարենային բոլորել:

Ըսէ՛ք, վարպետ, բողոքելու իրաւունք չունի՞մ:

— Տօրակոյս չկայ: Փոխանակ Լրացուցիչ դասընթացք հաստատելու, լաւագոյն գործ մը ըրած պիտի ըլլային՝ եթէ տարրականներու դասընթացքները բարելաւ վիճակի մէջ դնէին, մանաւանդ թէ տարրական նախակրթարաններու մէջ գրեթէ ամէն կողմ, բոլորու-

թարաններու մէջ գրեթէ ամէն կողմ, բոլորովին անտեսուած է ձեռական աշխատութիւնը, եւ զարմանալին այն է որ, զքեզ բարեփոխելու գլխաւոր շարժառիթներէն մին ալ՝ աւանդելի ուսումը աւելի գործնականացնել է կ'ըսուի. Բայց արի՛ տե՛ս որ ամէն բան նախապէս խորհելով, զքեզ պէտք եղածին չափ օժտած էմ մանրամասնելով, ձեռական աշխատութիւնը երեք դասընթացքներու ու կրկին սեռերուն համար. բայց ո՞վ է կարգացողը քու 10րդ յօդուածովդ աւանդուելիք ուսումներու շարքին 10րդ հատուածը:

Սիրելի՛ս, քու վրադ հսկող մարմիններունը չէ ատոր յանցանքը, այլ ասոնց վրայ վերին հսկողութիւնը ունեցող մարմինն է պատասխանատուն, որ փոխանակ քու ոգիդ ճշդիւ ըմբռնելու, փոխանակ քեզմով ծրագրուածները ճշդիւ գործադրութեան մէջ դրնելու, բացում աղմուկ կը հանէ վասն ոչնչի:

(Շարունակութիւնը յաջորդիւ)

ԼԱՐՍՆԵՔ ՍԸ

(Նմանողաբար)

Կիսախարխուլ տաճարին մէջ առ խարխար Օրհներգութեան բառերու կար մեծ խուճապ, Տէրտէրն էր այն որ անհամբեր կ'ընէր փոյթ-Շուտ աւարտել պըստի մը խեղճ անհասոյթ:

Երբ հոն հասան ուր կը հարցնեն երկուքին.
«Տէր կամ հնազանդ ես մինչեւ վերջ քու կեանքին»:

Դարձաւ տէրտէրն նոր փեսային ու հարսին,
Ծանուցում չէր ըսելիքը չոր ու սին:

Բայց շուարած գոյգին դէմքէն անհրապոյր,
Մաղթանք մ'ըրաւ սըրտէն փրթած, սոյ-րասուր,

«Տըղաքս ըսաւ, դուք սիրեցէք միշտ զիրար,
Եթէ ոչ գտնել ձեզ սիրողներ, է դժուար»:

Բերա

ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ

ՊԱԼՍՈՅ ՀԱՅ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

ՈՒՍՈՒՅԶԱՊԵՏ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Անանկ կը հաւատամ թէ, համայնքի մը յառաջդիմութիւնը միշտ կախում ունի լաւ դաստիարակներէն, որոնք կ'աշխատին մեր ապագայ սերունդին մանկային դատարկ ու անգիտակ հոգիներուն մէջ ձգել բարոյականի հիմերը, նկարագիր մը կազմել տալ անոնց, մանաւանդ ազնիւ մարդուն նկարագիրը, եւ ինծի համար մարդուն նկարագիրը, ինչ որ ալ ըլլայ միշտ իր դաստիարակին գործն է: Պէրպերեան այս տեսակետէն դիտելով՝ եւ զական դէմք մըն է մեր մէջ:

Ուսուցչութեան ասպարէզէն չի ձանձրացող եւ տարիներու հոլովումին հետ, իր ուսնելու եւ մանաւանդ ուսուցանելու եռանդը բազմապատկող ուսուցիչ՝ միայն Պէրպերեանը կը ճանչնամ, որ գիտէ վարժապետութեան միօրինակ կեանքին մէջ, ամէն օր նորութիւն մը աւելցնել, միշտ մեծ հաճոյքով մը կը դասախօսէ, մանաւանդ երբ իմաստասիրութեան դասը ըլլայ անիկա, որուն անանկ փայլ մը կուտայ եւ անանկ զգացում մը, որ իր սաները հետաքրքրութեամբ, ժալմերով անոր բերնէն կախուած կը մնան: Ժամը յօքնակի գործածեցի, որովհետեւ Պէրպերեան ճիշդ մէկ ժամ դասախօսել չի գիտեր երբէք:

Այսու հանդերձ Պէրպերեան վարժապետ մը ըլլալէ աւելի հեղինակ մըն է տաղանդաւոր որքան բեղմնաւոր, ամէն նիւթի վրայ կը գրէ, դնելով իր հմտութիւնը եւ զգացումը: Իր աշխատութիւնները, մեր ներկայ գրականութեան մէջ, կարեւոր անդ մը գըրաւած են. գրած է գրական ամէն սեռերուն վրայ, իրեն յատուկ ծաղկեալ ոճով մը, Առաջին տարիներուն մէջ ամփոփուած են բանաստեղծութիւններ ու ճառեր: Հաւրճեի բանք հաւաստեցող ուրուիք, ուր կը խօսուի զանազան կրօնքներու վրայ: Թշուառութիւն եւ գութ ուր կը նը-

կարուին կեանքի պանկերներ, որոնք թըշուառութիւնը կը ներկայացնեն, եւ անոնց դիմաց գութը՝ եւ անոր կարեւորութիւնը շեշտուած է: Գեղեցիկն ու գեղարուեստ, ուր գեղեցիկն Théorieին եւ զանազան գեղարուեստներու վրայ կը խօսի: Ժողովուրդային գրասանկներ, ուր մարդաց յոռի գրասանքները ցուցունելով կ'զգուշացնէ զանոնք եւ լաւերն ի վեր կը հանէ: Մարդիկ եւ իրք եւ դաստիարակի մը խօսքերը, որոնց մէջ ամփոփուած են իր քննադատութիւնները ու ճառերը, եւ իր սաներուն ուղղեալ ւ Հոռակ բաները: Խոնք եւ յուշ, որ է իր ընտանեկան ցաւին ազդեցութեան տակ խորհրդածութիւններ ու յիշատակներ:

Հրատարակած է նաեւ երկու դասական գրքեր. Բաղադրական տեսութիւն եւ Ա. գիրք Գաղ. ի Հայ. քարգը. եւ վերջապէս Գերմանիոյ մեծանուն բանաստեղծին կէօթէի Հերման եւ Դուրքեային Թարգմանութիւնը զոր վերջերս, առիթը ունեցայ բազմապատկել իր բնագրին հետ, որուն շատ հաւատարիմ մնացած էր Պէրպերեան, առանց իմաստի ցաւալի մթութեան մը մէջ կորսուելու:

Պէրպերեան իբրեւ իմաստասէր, իբրեւ բանաստեղծ, իբրեւ հեղինակ, իբրեւ գրագէտ, իբրեւ բարոյագէտ, իբրեւ Թարգմանիչ եւ իբրեւ վարիչ, շատ անգամներ ներկայացուած է արդէն ընթերցողաց, շեշտուած է անոր արտակարգ կարողութիւնը, ուստի չի պիտի ուզենք հոս կրկնուած բաներ վերստին կրկնել:

Մեր ուսուցչական մարմնոյն էն արդիւնաւոր անդամներէն է, որ հմուտ է Հայ. Օսմ. Գաղ. Անգլ. Գերմ. Յունարէն, Լատիներէն լեզուներուն եւ գիտութեանց:

Իսկ իր վարժարանը կը յարատեւէ անընդհատ մի եւ նոյն բարձրութեան մէջ, տարուէ տարի ազգին ընծայելով, նոր լուսամիտ անհատներ, որոնք արդէն պատեհութիւնը ունեցած են վայելելու բարոյական խնամքն մեծանուն հիմնադրին, ինչպէս նաեւ այն մեծ բարեբաղդութիւնը հպելու անոր բազմահմուտ ծանօթութեանց մթերքին: Պէրպերեան վարժարանի համարը արդէն տարածուած է ամենուրեք: Իր գործը ինքնին արդէն շատ պերճախօս է եւ իր իտէալն այսօր իրականացած է, քանի որ կրնանք համբել նշանակելի թիւ մը իր շրջանաւարտներէն, որոնք իբր հանրային անհատ պատուաբեր են ազգին:

ԼԵՒՈՆ

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Շարժուն շեռք

Նավատա նահանգին Չըրչիլ կոմսութեան մէջ, աշխարհագրական չնաշխարհիկ երեւոյթ մը գոյութիւն ունի: Հոն՝ հսկայ լեռ մը կայ, որ աւազի շեղակոյտէ մը կազմուած է եւ յարատեւ շարժման մէջ է վիթխարի սառնակոյտի մը պէս, որ ձորերու ու նեղ կիրճերու վրայէն սահելով՝ կը սողոսկի անդադար: Աւազի հատիկները իրարու հետ չիփուելով, առաջ կը բերեն երաժշտական խուլ աղմուկ մը, որ Եգիպտական Սպինքսներու ձայնը կը յիշեցնէ: Եգիպտական առասպելներու մէջ յիշուած քարէ արձաններու երգերը, որոնք առաւօտները արշաւոյսին կը լսուէին, ծնունդ առած են վերոյիշեալ նմանօրինակ երեւոյթէ մը:

Չըրչիլի շարժուն լեռը ուրիշ հետաքրքրաշարժ կողմ մըն ալ ունի: Իր կողերը կազմուած են վերադիր աւազի համաչափ խււերէ, եւ գազաթը, փոխանակ սեպածայր վերջաւորելու, ընդհակառակը խոռոչային մեծ ծակ մը ունի, ուր հակառակ ուղղութեան փոշոյ հովեր անդադար վեր ի վայր կը շրջեն աւազի հատիկները: Այն որ կը յանդգնի այդ աւազէ լեռը մագլցելով խառնարանը հասնիլ, իր կեանքը վտանգելու փորձութեան մէջ կ'իյնայ, վասն զի անհաստատ աւազը տեղի կուտայ իր քայլերուն, եւ որչափ յետս ընկրկելու ճիգեր ընէ, այնչափ ալ աւելի աւազին մէջը կը մխրճուի, անգամ մըն ալ դուրս չեկալու պայմանաւ:

Հնդիկներու կողմէ կը յիշատակուին այս եղանակաւ կորսուողներու բազմաթիւ օրինակներ:

Կապիկե մը բժշկուած

Կարդինալին մէկը խոշոր պալար մը ունէր իր կոկորդին մէջ, ուր վիրաբուժական գործողութիւն մը անկարելի էր, եւ այդ ուռեցքը պայթեցնելու բժշկական ամէն միջոց կը պակսէր: Մէկ խօսքով, այդ բարձրաստիճան եկեղեցականին կեանքը ծանր վտանգի մէջ էր եւ հեղձամահ ըլլալու ժամերը հետզհետէ կը մօտենային:

Կարդինալին կապիկը, որ նոյն պահուն սենեակին մէջ կը գտնուէր, իր տիրոջ գտակը խլելով, իր գլխուն անցուց:

Ասոր վրայ, Նորին Գերապատուութիւնը այնպիսի զօրաւոր քահքահ մը փրցուց որ պալարը վայրկենապէս պայթելով, ստոյգ մահուանէ մը ազատեցաւ:

* *

Ո՞ր քեռով անկածե՞ ընկրու ե կիները

Հին ատեն այրերը ձախ թելով անկածէ կ'ընէին կիները, վասն զի աջ թելը անձնապաշտպանութեան սահմանուած էր: Աջ բազուկը պէտք էր ազատ մնալ, որպէս զի արական սեռի ներկայացուցիչները կարենային ի հարկին ամէն վտանգ չէզոքացնել, բարեւտալ ծանօթներու եւ ազատ համարձակ շարժել ձեռքի գաւազանը:

Մինչդեռ ներկայ դարուս մէջ այդ պէտքը զգալի չըլլալով, կնոջ ընկերացող ամուսին մը կամ օրիորդի մը հետ պարող երիտասարդ մը, միշտ իր աջ թելը կը ներկայացնէ թեկնածուին:

ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐՈՍԱԻ



ՍՈՓԵՍՏԻՆ ՀԱՄԲԱՐԸ

«Ձանձրոյք, զգուանք առքեկ ինձ սա պօշ մարդիկ

«Որք կը խրչեն քանկ ժամերս ամեն օր,
«Գեթ ունենան դոյզն քան մը սորվելիք
«Ձի ցաւիւր սիրս. այլ եռանդեամբ գորաւոր
«Կը փութաւ ես կրքիլ զանոնք այն ասեկ,
«Է՛հ, հասկընաւ թե մեծ հոշակ կը հանեւ...
«Արժանընիւր աշակերտներ քանիւնաց
«Կը հասցընեւ, եւ ի հարկին իբր սոխ
«Կ'ուղղեւ զանոնք նախանձայոյզ բշխանաց
«Չարաշեգու մրցակցաց դեմ յանդիման,
«Մեծ պատեհէ մը բարձրացնելով անդ համայն
«Փառք ու պատշոյս, մեծ հանձնարիս յաղթական
«Մեծ անուն մի՞, մեծ հոշակ մի՞, ո՛հ, անոնք
«Անգոր, սկար, շա՛ս սկար բառեր եւ յոկ
«Բացատրելու համար ցաղանդն ու ի բնե

«Շնունդ առաւ այս գանկին մէջ փառապանծ,
«Որոց յարգանք մասնուանէ խուժը մարդկանց
«Փոքրէն մինչ մեծն, արու քե եզ, եւ գոչե.
«Ո՛վ վարժապետ, ո՛վ հեռսոր, ո՛վ դու հաւն-
մար աշխարհի...
«Կեաց դո՛ւ ոգի գերմարդկային տաղանդի...»

Այսպէս խօսէր մեր տիկնոջը, շայնածայ
Բարոզ կարգաւ խղոցներու մեծ խմբին,
Այս վերջիններն որ ըսես յապուշ կրթեալ,
Բերանաքաց մեր հերոսին նայիկն,
Եւ մերք ընդ մերք իրենք իրենց դառնալով
Գլուխ, աջ, ախանջ կը շարժէին իբր կով...
Առանց երբեք բան մ'հասկցած ըլլալու...
Մեջերսնէն մին քուրք անոնց խրատն
Ու կը մեկնէր մե՛ծ, վարպետին առակներ
Որ չ'էր այլ ինչ բայց իւր երգը մշտանէր...
Օրին մեկն ալ խեղճ գլուխներն ձանձրացեալ
Մեր տիկնոջին սին, անօգուտ խօսքերէն,
Հասկցան քե երբեք խալը չկար ալ
Իրենց, ուստի խորհուրդ ըրին փութօրէն,
Անոր պաշտօն եղանակաւ դաս մը տալ...
Օր մ'ալ խեղճը հազիւ բերանն էր բացած,
Բոռնցներու խիս անտաւ մը, ո՛հ, կարծես
Տնկուեցաւ, եւ բերաններ շայնաքաց
Գոչեցին, պիտի, իջեցնելով քաջապէս
Հարուածներու տեղատարաւ մ'ահաւոր
Մարդուն գլխուն, թին, բերին, ախանջին
«Տանկալախին ասանկ դաս մը իրաւ որ
«Կ'արժէր տալ. — Արդ, ժամաւաճառ չ'ըլ-
լանք ա՛յ...»

— Աւանակին մեկն ալ քայց մեկն ենք եղեր,
«Որ մինչեւ ցարդ համբերեցինք շիւտոյս...
«Սորվելիքն ի՞նչ էր, ախպար, ասի չե՛ր...»
Անդիկէն մեկն իմաստնալից մեմեցէր...
Գալով մեր վեհ, տաղանդալից (°) վարպետին
Անկիւնի մը խորը կտրուած, կծկուած,
«Մեղայ, Աստուած, մեղայ մեյ մ'ալ չ'ենք
ըներ...»

Կը հեծկէսար, յուսահատ ու շայտին...
«Աւա՛ղ ա՛յս էր հրոտնորին տխուր, խեղճ
վախճան,
«Ա՛յս էր պարգեւս, աշխատութեան, ե-
րախտեաց...
«Վազ անցայ ես մարդ կրթելի փութաբան,
«Բիշ մ'ալ մընար կեանքս վրայ պիտ' տալի,
«Ոչ իբր գոհար, այլ իբր լեշ անպիտան...»

«Զե՛ւ արդ սոյոգ սա վեցեակը առակին,
«Թե աշկերտի համար գոհես անասնուն
«Ջանք, աշխատանք, կեանքդ իսկ տուես ի
հարկին,
«Գիտցիր որ ես պիտ' ուրանայ շուտ կամ ուշ
«Կարիքդ անհունն, նկատելով ինչ ապուշ,
«Օրին մեկն ալ տիկնոջ հարուածով անոյշ
«Տալով համայն ոսկրոտոյդ կար եւ ոյժ...»

ԱՐԱՄ ՅՈՎՍԷՓԵԱՆ



ԲԱՆԴԱՏՈՒԹԻՒՆ

Յրանաացի գրագէտը հայ գրագէտին հետ
բաղդատուելէ ետք, թող ներուի ինձ որ
այս անգամ Եւրոպացի վարժապետն Հայ
վարժապետին հետ բաղդատութեան դնեմ,
ըստ խնդրանաց մեր բարեկամ Տիար Մէ-
փիստովի:

Եւրոպացի վարժապետը քանի մը տարի-
ներ աշխատելէ ետք՝ տուներու, տեղերու
տէր կ'ըլլայ, մինչ հայ վարժապետը՝ բնա-
կած տանը վարձքն անգամ ամսէ ամիս կա-
նոնաւորութեամբ վճարելու դժուարութիւնը
կ'զգայ:

Եւրոպացի վարժապետը՝ ըսինք, տուներու,
կալուածներու տէր կ'ըլլայ, մինչ հայ վար-
ժապետը՝ եթէ հորմէն տուն մը ժառանգած
է, վերջին տարիներու մէջ ծախու հանելու
կըստիպուի, հանրային օգնութեան կարօտ
չի մնալու համար:

Եւրոպացի վարժապետները՝ վարժապետա-
նոցներէ ելած են եւ համալսարանական ուս-
մանց եւս հետեւած, մինչ հայ վարժապետ-
ները՝ բարձրագոյն նախակրթարանաց չըր-
ջանն աւարտելէ ետք, նետուած են ասպա-
րէզին մէջ. եւ ինքնօգնութեամբ տակաւ
զարգացած:

(Բացառութիւններ են, կ'ըսէ ահանջս
ի վար Մէփիստովի, ուսուցչական ընտրել-
եաց մէջ այն ընթացաւարտ պատանիները
որոնք յետ օրինական քննութեան ուսուցչու-
թեան վկայական ստացած են):

Եւ դարձեալ կան կ'ըսէ Մէփիստոփէլ խոստովանաբար, կարգ մը վարժապետներ ալ որոնք տարրական նախակրթարանի մը շրջանը դեռ չ'աւարտած, նետուած են չուկայի հրապարակը, ուր ժամանակ մը դեգերելէ, եւ ժամանակ մ'ալ եկեղեցեաց բակերու մէջ սլետկալէ ետք, վերջապէս մէկը ճարած եւ անոր ձեռքը յաջողած են վարժարան մը մտնել իբր վարժապետ (1):

Եւրոպացի վարժապետը՝ կուսուցանէ (բառին լայն առումովը), մինչ այս կարգի վարժապետը՝ պարզ ուղագրութիւն մը անգամ չ'գիտնալուն՝ դասի ատեն գիրքը ձեռքէ չեն կրնար ձգել:

(Այս տողերը գրած պահուս Մէփիստոփէլ քովս գտնուելով մատնանիչ ցոյց կուտայ Պոլսոյ մէջ գտնուած կարգ մը թաղային վարժարաններու դաստիարակները, որ բացարձակ տգէտներ են, եւ ելսէն ինչպէս վկայական մը ձեռք անցնելու համար տարիներէ հետէ անոնց ի գործ դրած բոլոր ֆանքերն ապարդիւն մնացած են):

Եւրոպացի վարժապետը՝ կը սնանի իւրով, մեզրով, հորթի, խոզի, հաւու եւ որսական կենդանեաց մսով, կը ճաշակէ Պոստոյի եւ Մատեռայի պատուական գինին, մինչ հայ վարժապետը՝ եթէ ցորեկները գաւաթ մը ջուրով, 10 փարայի հացով ու պնակ մը պարզ կերակուրով չի բաւականանայ, իրիկունը տանը ճամբան կը կորսնցունէ:

Աղջիկները Եւրոպացի բռնօքէսէօնին համար հոգի կուտան, մինչ հայ վարժապետին վրայ համակրելով հանդերձ՝ հեռու հեռու կը փախչին անկէ, որովհետեւ կը վախնան թէ չելլէ գիրենք կնութեան ուզէ:

Եւրոպացի վարժապետին տունը կը բերեն ամսաթոշակը, մինչ հայ վարժապետն ինքն անձամբ կերթայ ստանալու, եւ շատ անգամ ձեռնունայն ետ դառնալով, օրուան կարեւոր եւ անհրաժեշտ պէտքերն հոգալու համար կը պարտաւորի մէկէ մը, բարեկամէ մը փոխառութիւն ընել եւ կամ ժամացոյցն (եթէ ունի) լուսայափոխի քով ռեհին դնել եւ դրամ փոխ առնել:

Եւրոպացի վարժապետը՝ հեղինակութիւններ ընելով դրամ կը դիզէ, մինչ հայ վար-

ժապետը՝ եթէ ասանկ բան մ'ընելու ձեռնարկէ, բնական տունը (եթէ ունի) ծախու հանելու աչք պիտի առնէ, որովհետեւ հրապարակն այնքան ողողուած է դատական հեղինակութիւններով, որ դպրոցներու տնօրէններն ալ չուարած են թէ ո՞րն ընտրեն, ո՞րը թողուն:

Եւրոպացի վարժապետին մէկ ամսաթոշակը կարծէ հայ վարժապետին մէկ տարեթոշակը: (Իրաւ է, կ'ըսէ Մէփիստոփէլ):

Եւրոպացի վարժապետին իսեալն է ուսուցանել եւ դրամ չահիլ, մինչ հայ վարժապետինը՝ թէ ուսուցանել է եւ թէ . . . վերջապէս բան մ'ալ չոր ինքն ալ չգիտեր: (Արդեօք դրամ չահիլ, կը հարցնէ Մէփիստոփէլ, չարամիտ ժպիտով մը):

Եւրոպացի վարժապետը շատ մը համակիրներ ունի իր շուրջը, հայ վարժապետն ալ շատ մը կնքահայր աղաներ, որոնց ոչ գոյ թիւ եւ համար:

Եւրոպացի վարժապետը շատ անգամ կերեւի հասարակաց պարտէզներու եւ զբօսարաններու մէջ, բարեկամաց հետ կուտէ կը խմէ եւ կը լարձանայ, մինչ հայ վարժապետը՝ եթէ առանկ բան մընէ, դիտետուն մը մտնելով՝ քանի մը բարեկամներու հետ ժամանակ անցնէ, զբօսու, այս բանն իբր ոճիր կը նկատուի եւ խեղճ քարկոծելու չափ առաջ կերթան:

Եւրոպացի վարժապետը՝ տարւոյն չորս եղանակաց համաձայն քօստիւմներ կը հագնի, մինչ հայ վարժապետը ի հարկին կարմիր աքլօրը կը յիշէ եւ երաշխաւոր գտնելու հոգն ալ գիշերները քունն աչքէն կը հեռացնէ:

Եւրոպացի վարժապետը վաքանսի երեք ամիսները ամսականները ծոցիկը դրած պըտտելու, զուարճանալու տեղ կը փնտռէ, մինչ հայ վարժապետը՝ տարւոյն վերջը հրաժարականը ծոցիկը կը դնէ եւ վկայականը ձեռքը թաղէ թաղ, դպրոցէ դպրոց կը շրջի հետիոտն, ծարաւ եւ նօթի, որպէս զի գէշ աղէկ տեղ մը ճարէ եւ գլուխը խօթէ:

Եւրոպացի վարժապետը՝ եթէ մեռնի, աշխարհք ոտք կ'ելլայ, մինչ հայ վարժապետը եթէ հանգչի (մեռնի) դրացին անգամ չի մանար:

Գ. Փ.

“ՅԱՆԳԱՐԱՆ”Ի ՄԱՍԻՆ

ՀԵՏԵՆԻՊՈՒԹԵԱՄԲ ՅԱՆԳԱՐԱՆԻ

Բարին Աստուած երբ աշխարհքը ստեղծեց,
Ու ամեն բան չըզոյե ի գոյ ամեց,
Շուտ բան բողոք գաղտնի եւ կամ հագուագիւտ,
Որ երբ մարդիկ զսնեն՝ ըրած ըլլան գիւտ:

Եւ զիսէ՞ք թէ մինչեւ ցայսօր ինչ գիւտեր,
Այն խեղացի մեծ գիտուններն եւ գրեւ,
Որոնք գործեր եւն ճոխ, բեղուն ուղեղի
Ոյց զովեսին չի բաւեր այս սուղ տեղի:

Որպի՞սի մեծ հեղինակներ գրողներ,
Եկած զացած եւ եւ դեռ շա՛տ եկողներ,
Այսօր ահա մեր մէջ հաս մը փայլեցաւ,
Գացողներուն գեր մէկ պակասն ալ յեցաւ:

Մեր յարգելի գիտնական Պ. Խ. Թերզեան,
Որուն գործ ոչ օգուտ ունի ոչ զիշան,
Հրապարակ հանեց մի նոր Յանգարան,
Որով պճնի գրագիտաց բանգարան:

Այ հարկ չըկայ մարդու զանկը չարչարել,
Որ կարենայ յանգաւոր բառ մը ճարել:

Եթէ թուե՞ք չորս դահեկան արծաթեայ,
Կունենա՞ք բառ յանգաւոր գեր փափաքեայ:

Բանաստեղծներ կայտնեցին ու ցրեցան,
Զի Տիար Թերզեան քսեց իրենց եղ հացին:

Ամեն մարդ ալ կրնայ գրել յանգաւոր,
Ըլլայ նոյն իսկ վարժապետ մը ճայնաւոր:

Ոտանաւոր գրելուն հարց շուծուեցաւ,
Մըսածեղեն այլ եւս չիկայ գիտու ցաւ:

Եւ այս բանիս ով որ ալ որ նախանձի,
Գեշ չեմ ըսեր մազն ու մօռուքն թող խանձի:

Ահա յանգեր փող, ծող, հող, տող, շող, դող, գող,
Ի՞նչ հարկ այլ եւս որ մարդ ըլլայ բանագող:

Նամանաւանդ ֆով, հով, բով, սով, գով, ծով,
Կրնա՞ս գրել ոտանաւոր մ'Աստուածով:

Բանի որ կան յանգեր վեր, սեր, գեր, սեր, ծեր,
Գրելոյ նայե ու բնաւ մի մըսածեր:

Նոյնպէս աղուէս, կրկէս, այսպէս ու հանդէս,
Գրիսու ցաւին ալ կը կապեն բարբաքս:

Ա՛խ, վախ, նախ, կախ, ուրախ, խորախ ու երախ,
Շուտ կըսպառի երբեք մ'ըներ դուն մերախ:

Եւ ֆանի որ ֆաղ, մաղ, քարձ, դարձ, վարձ,
սանձ, գանձ,
Զորսի կուտան էնկիւրիի հաւնով սանձ:

Գոյժ, ոյժ, յոյժ, ուշ, տոյժ, տուժ, գոյժ,
թուշ, ուշ, յուշ, փուշ,
Շուտ կաղաչեմ չըսես ինծի դուն ապուշ:

Վայրագ, խմբակ, արքակ, համբակ ու յամբակ,
Մէկ եօռդանին կերթայ երեք ֆաշ բամպակ:

Օն դոյժ եւս կին գրողներ, վեր վերցուցե՞ք
ձեր վեշտե՞ք,
Որ շաւ տեսե՞ք պայծառ աջով հիանալի
ճերմեշտե՞ք:

Որ արտադրեց յանգաւորաց մեծ պաշար,
Յանգեր՝ որոնք տեսած չունին գրաշար:

Ու այս երկը որ կը կոչուի Մուսամա,
Պիտի ընէ Թերզեան անունն միշտ անմահ:

Ոհ այս Զեր գանկ,
Կարժէ խիստ բանկ:

Ահա իմ պարզ դիտողութիւն,
Տու՛ք ծառանուդ բողոքութիւն:

Սորախորին
յարգանք
ԵՐՄՈՂ

ՍԿԻՆՈՐ

Արդեօք ընդհանուրին չահն մաս-
նաւորին չահուն չգոհելու սկզմա՞մբ է
որ կիներէն ոմանք իրենց ամուսինէն
զատ ուրիշ անձեր ալ սիրելու տրա-
մադիր կը գտնուին:

×

Առաւօտէ մինչեւ երեկոյ պատու-
հանի առջեւ նստող կիները պարտեղի
մը պատին առջեւ տնկուած ծառեր են,
ամէն անցնողն բան մը փրցունել կը փա-
փաքի:

×

Սիրահարները կիրակի չունին:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈՒՔՐԷՇ. — Տեղւոյս եկեղեցիին մէջ, պատարագի ատեն, երկու կիներ ծեծկուեցան: Կից, ապտակ անխնայ կը շռայլէին իրարու: Մազի փունջեր ցրցքնուած էին գետինը, մէկուն չըրջագցատը վերէն վար պատուած էր և միւսին երեսը արեան բիծերով ներկուած էին: Կիներէն մէկը երիցուհին էր Տ. Մոսկոփեան շնորհունակ քահանային, և միւսը. . . հոմանուհին տիկին Պայծառ: Երիցուհին երբ կը տեսնէ իր ամուսնին հոմանուհին՝ կը թքնէ անոր երեսն ի վեր, որ չէր խղճահարած իր տէրաէր էրիկը ձեռքէն խլելու, ահա թէ ինչու ծայր տուած էր ծեծկուութիւնը այս երկու կիներուն միջեւ: Բայց ո՞վ պիտի յանդգնէր երկու կնոջ մէջտեղը մտնել վերջ տալու համար այս կնոջական ծեծկուութիւն: Եւ ահա Տ. Մոսկոփեան շնորհունակը կը մտնէ մէջ և լաւ տփոց մը կը քաշէ իր երէցկիներն որ համարձակած էր նախատել իր աղւոր հոմանուհին:

Մ. Խ. — Քահանայական այս շատակութիւնը դուռները դոցեց: Լսելիք չունիմ, վասն զի եղածը հաշիւէ դուրս բան է:

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ. — Այս չաբթու երկու ամուսնալուծումներ տեղի ունեցան: Կիները անպարտ հռչակուեցան և արտօնուեցան վերամուսնանալ:

Մ. Խ. — Կերեւայ թէ այրերը առանց արտօնութեան արդէն վերավեր ամուսնացած են:

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Երկուշաբթի օր Մայր եկեղեցւոյ մէջ հարսանեկան աւարողութեանց պահուն երբ քահանան

չեշտելով կը հարցնէր հարսին թէ՝ «մինչեւ ցմահ հնազանդ ես», եւ հարսը կը պատրաստուէր փոխան այո՛ւի գլուխը ծռել, նոյն պահուն հանդիսականաց մէջէն ոչ հրաւիրեալ նալեւաշուք օրիորդ մը, որ կերելի թէ ինքն ալ իր կարգին կը փափաքէր աւանդական քիչիչէին արժանանալու, բարձրաձայն հարսէն առաջ «այո» պատասխանեց:

Մ. Խ. — Մենք ալ մեր կողմէն *savou* կը մաղթենք յիշեալ օրիորդին:

ՊԱՆՏՐՄԱ. — Ամուսնական հրապարակը Ետինճիքցի աղջիկներով ողորուեցան:

Մ. Խ. — Պանտրմացի աղջիկներն ալ թող Ետինճիքի հրապարակը ողորդեն:

ՆԱՌԼԸ-ԳԱՐՈՒ. — Երկուշաբթի օր տեղւոյս Ս. Յովհաննէս եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած հարսանեկան արարողութենէն վերջ, գեռ հարսնեւորները դուրս չելած, լուսարարը որուն 30 զրշ նուէր ուղարկած էր, կըսկսի մոմերը մարելով պօռալ «չատ լոյս ուզողը փարայ կուտայ, տրուած դրամով այսչափ լոյս կըլլայ, վայ կիտի տիւյիւն վայ»: Այսչափով չի լմննար սակայն: Մեր տիրացու լուսարարը փեսին լաստիկները կը պահէ, անկէ ալ կըրիկ նուէր մը շորթեւ մտքով:

Մ. Խ. — Փառք տալու ենք Աստուծոյ, եթէ այդ լուսարարին ժամանակ մը վերջը քահանայ ձեռնադրուած ըլլալու լուրը չի հասնի մեզի:

Arsoñasker ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը այի ճատտեքի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ՝

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ իջուտ սննդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղիղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անղուգական կազդուրիչ դեղը, զնահատուած համբաւաւոր բժիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, գալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահճէ-գաբու, ընդհանուր նախապատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և գործից միջերանոցներու քով:

50—29

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԵԼԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գինից յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուստներու, կանանց բեղունիներու և տղայոց չիք և դիմացկուն ֆօսֆիւրներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—23

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ զնախա-

կար նիւթերէ բոլորովին զերծ է:

Յիշեալ ջուրը մաշերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եղած հրահանգները տրուած են, ոսկէ զատ ձերիտէի Վեգաիի Թըպպիյէի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են:



Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառաջիկ ջուրեր պատրաստելով իրեն տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշերը, զգուշացէ՛ք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատտէսի, յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, ուր պիտի գրտնէք մաքուր ջուր ձեր մաշերուն գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:

Գ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԷՑԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՑԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ չղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստափութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստափութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար չաքաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայլթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղը

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-19

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։